ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ 2026



ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2026 թվականի հունվար–մարտին կազմել է 6.8%:

Արդյունաբերություն: Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2026 թվականի հունվար–մարտին աճել է 13.4%-ով: Ոլորտի աճի վրա դրականորեն ազդել են մշակող արդյունաբերության 9.5% և հանքագործական արդյունաբերության 36.8% աճերը:

Առևտուր: Ներքին առևտրի շրջանառությունը 2026 թվականի հունվար–մարտին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 2.1%-ով:

Գյուղատնտեսություն: Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ծավալը 2026 թվականի հունվար–մարտին կրճատվել է -3.2%-ով, որից գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ -5.2%-ով:

Ենթաճյուղեր.

- բուսաբուծությունը կրճատվել է -16.6%-ով, անասնաբուծությունը կրճատվել է -1.8%-ով, անտառային տնտեսությունն աճել է 46.4%-ով, ձկնորսությունն աճել է 3.9%-ով:

Շինարարություն: Շինարարության ծավալի աճը 2026 թվականի հունվար–մարտին կազմել է 22.0%: Աճին նպաստած հիմնական ֆինանսական աղբյուրներն են եղել կազմակերպությունների միջոցները՝ աճը 33.9%, և բնակչության միջոցները՝ աճը 23.8%:

Ծառայություններ: Ծառայությունների ծավալը 2026 թվականի հունվար–մարտին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 7.4%-ով: Աճ գրանցվել է բոլոր ենթաճյուղերում՝ բացառությամբ կրթության ոլորտի՝ կրճատումը -2.3%:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ 2026թ. հունվար-մարտ, աճողական



ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՄԻՏՈՒՄ

Զբոսաշրջության միտումը (2026թ. հունվար–մարտ)

- 2026 թվականի հունվար–մարտին զբոսաշրջիկների թիվը կազմել է 453,138 մարդ, ինչը 17.2%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ:

- 2026 թվականի հունվար–մարտին Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկների մասնաբաժինը ընդհանուր ժամանումների մեջ կազմել է 39.4%՝ 2025 թվականի նույն ժամանակահատվածի 37.3%-ի դիմաց:

- Ընդհանուր ժամանումների աճը հիմնականում պայմանավորված է եղել հետևյալ երկրներից զբոսաշրջային հոսքի ավելացմամբ.

  - Ռուսաստան՝ +34,249
  - Վրաստան՝ +7,507
  - Ուկրաինա՝ +1,714.
  - Չինաստան՝ +2,347
  - Գերմանիա՝ +2,611
  - ԱՄՆ՝ +1,142

Գծապատկեր 2. Միջազգային զբոսաշրջիկների ժամանումները (հազ. մարդ):



Գծապատկեր 3. Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկների թվաքանակ (մարդ):



ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐ

Ծագման Երկիր

Հունվար-մարտ 2026թ.

Երկիր	Զբոսաշրջիկներ	Աճ/ Կրճատում, %
Ռուսաստան	178,321	23.8
Վրաստան	67,131	12.6
Իրան	34,960	1.7
Ուկրաինա	6,775	33.9
Չինաստան	6,210	60.8
Գերմանիա	5,984	77.4
ԱՄՆ	5,608	25.6
Հնդկաստան	5,083	-15.6
Ֆրանսիա	4,752	24.2
Իտալիա	4,322	43.3



ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԱՔԱՆԱԿ

453,138

Արտահանում:

2026 թվականի հունվար–մարտին արտահանման ծավալը կազմել է 1,760.2 մլն ԱՄՆ դոլար, ինչը 76.6 մլն ԱՄՆ դոլարով, կամ 4.5%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Հայաստանից 2026 թվականի հունվար–մարտին արտահանված հիմնական ապրանքներն են (աճը 2025 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ).

- Պղինձի հանքաքար, խտանյութ՝ 241.8 մլն դոլար (աճ՝ 2.2 անգամ),
- հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր՝ 234.9 մլն դոլար (աճ՝ 11.6%-ով),
- ոսկերչական իրեր՝ 155.5 մլն դոլար (աճ՝ 2.2 անգամ),
- սիգարետ և սիգար՝ 147.1 մլն դոլար (նվազում՝ 0.6%-ով),
- մոլիբդենի հանքաքար, խտանյութ՝ 88.8 մլն դոլար (աճ՝ 2.5 անգամ):

Գծապատկեր 4. Արտահանման ծավալը 2026 թվականի հունվար–մարտին (մլն ԱՄՆ դոլար):



Գծապատկեր 5. 2026 թվականի հունվար–մարտին արտահանման առավելագույն ծավալով ապրանքները (մլն ԱՄՆ դոլար):



ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Հիմնական առևտրային գործընկեր երկրներ

2026 թվականի հունվար–մարտին Հայաստանի արտահանման գծով հիմնական առևտրային գործընկեր երկրներն են՝

- **Ռուսաստան** — արտահանումը կազմել է 639.3 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով 7.1%-ով,
- **Չինաստան** — 251.3 մլն ԱՄՆ դոլար, աճ՝ 2.3 անգամ,
- **Արաբական Միացյալ Էմիրություններ** — 145.9 մլն ԱՄՆ դոլար, ինչը 65.2%-ով պակաս է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ,
- **Հոնկոնգ** — 113.9 մլն ԱՄՆ դոլար, աճ՝ 2.6 անգամ:

Վերոնշյալ վեց երկրների մասնաբաժինը կազմել է Հայաստանի արտահանման ծավալի 65.4%-ը:

Գծապատկեր 6. Արտահանումն ըստ երկրների 2026 թվական հունվար–մարտ, տեսակարար կշիռը (%):



ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ներմուծում: 2026 թվականի հունվար–մարտին ներմուծումը կազմել է 2,944.8 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 129.7 մլն ԱՄՆ դոլարով կամ 4.6%- ով:

2026 թվականի հունվար–մարտին ՀՀ ներմուծված հիմնական ապրանքներն են (2025 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ)՝

- Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր՝ լարային կապի համար - 355.8 մլն դոլար (32.8% աճ),
- ավտոմեքենա մարդատար - 210.4 մլն դոլար (0.1% նվազում),
- բնական և հեղուկ գազ — 207.9 մլն դոլար (15.9% աճ),
- ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի — 136.2 մլն դոլար (64.5% նվազում),
- նավթ և նավթամթերք (բենզին, մազութ, նավթ, դիզելային վառելիք, յուղ) — 119.2 մլն դոլար (2.9% աճ):

Գծապատկեր 7. Ներմուծման ծավալը 2026թ.հունվար–մարտին (մլն ԱՄՆ դոլար) ԱՄՆ):



Գծապատկեր 8. Ներմուծման առավելագույն ծավալ ունեցող ապրանքները 2026 թվականի հունվար–մարտ (մլն ԱՄՆ դոլար)



ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

2026 թվականի հունվար–մարտին ներմուծման գծով հիմնական առևտրային գործընկեր երկրներն են՝

- **Ռուսաստան** — 727.6 մլն ԱՄՆ դոլար, նվազում՝ 23.6%-ով,
- **Վիետնամ** — 330.3 մլն ԱՄՆ դոլար, աճ՝ 27.3%-ով,
- **Չինաստան** — 319.7 մլն ԱՄՆ դոլար, նվազում՝ 7.9%-ով,
- **Վրաստան** — 187.7 մլն ԱՄՆ դոլար, աճ՝ 15.3%-ով,
- **Իրան** — 158.4 մլն ԱՄՆ դոլար, աճ՝ 5.0%-ով,
- **ԱՄՆ** — 121.4 մլն ԱՄՆ դոլար, աճ՝ 30.1%-ով:

Վերոնշյալ 6 երկրների մասնաբաժինը կազմել է Հայաստանի ներմուծման ծավալի 62.7%-ը:

Գծապատկեր 9. Ներմուծումն ըստ երկրների 2026 թվականի հունվար–մարտ, տեսակարար կշիռը (%):



ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

ՖՈՐՄԱԼ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի մարտի վերջի դրությամբ պաշտոնապես զբաղվածների թիվը կազմել է 812.4 հազար մարդ, ինչը 3.6%-ով ավելի է 2025 թվականի ցուցանիշի համեմատ:

Զբաղվածության առաջատար ոլորտները 2026 թվականի մարտի վերջի դրությամբ՝

- Մեծածախ և Մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում՝ 137,960
- Կրթություն՝ 131,061
- Մշակող արդյունաբերություն՝ 94,098:
- Առողջապահություն և սոցիալական սպասարկում՝ 56,753:
- Տեղեկատվություն և կապ՝ 46,049:
- Կացության և հանրային սննդի կազմակերպում՝ 44,385:

2025թ. մարտի համեմատ զբաղվածությունն աճել է գրեթե բոլոր ոլորտներում, բացառությամբ այլ ծառայությունների մատուցման, որտեղ գրանցվել է -15.2% կրճատում:

Գծապատկեր 10. Ֆորմալ զբաղվածություն, հազար աշխատող:



Գծապատկեր 11. Պաշտոնական զբաղվածությունն ըստ առաջատար ոլորտների 2026 թվականի մարտին, տեսակարար կշիռը (%):



ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2026 թվականի հունվար–մարտին միջին ամսական աշխատավարձը կազմել է 307,631 դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.9% - ով:

Միջին աշխատավարձն ըստ ոլորտների՝

- **պետական հատված՝** 234,793 դրամ, աճը՝ 6.9%,
- **մասնավոր հատված՝** 335,870 դրամ, աճը՝ 1.7%:

Գծապատկեր 12. Միջին աշխատավարձն ըստ տնտեսության ճյուղերի 2026 թվականի հունվար-մարտ, հազ.դրամ



https://www.armstat.am/am/?nid=964

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔԸ ԵՎ ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔԸ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2026թ. հունվար-մարտին դրամային փոխանցումների ներհոսքը կազմել է 1,472.2 մլն ԱՄՆ դոլար, ինչը 15.8%-ով ավել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Զուտ ներհոսքը նույն ժամանակահատվածում կազմել է 1,639.5 մլն ԱՄՆ դոլար, ինչը 3.2 անգամ ավել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Առավելագույն դրամային փոխանցումներ ստացվել են հետևյալ երկու երկրներից (վերջիններիս գումարային տեսակարար կշիռը կազմել է ընդհանուր ներհոսքի 76.9%-ը)՝

- Ռուսաստան՝ 945.3 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ +15.3%),
- ԱՄՆ ՝ 187.4 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ +18.9%):

Գծապատկեր 14. Դրամական հոսքերն ըստ երկրների 2026 թվականի հունվար–մարտ, մլն ԱՄՆ դոլար և տեսակարար կշիռը ընդհանուր հոսքում (%):



Գծապատկեր 13. Դրամական փոխանցումներ և փոխարժեք:



ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ ՄԻՏՈՒՄՆԵՐ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հունվար–մարտ ամիսներին սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) կազմել է 4.2%:

Մարտ ամսին նախորդ տարվա մարտի համեմատ ՍԳԻ-ն կազմել է 4.5%:

Տնտեսության առանձին ճյուղերում 2026 թվականի առաջին եռամսյակում, 2025 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, արձանագրվել է արտահանման գների նվազում՝ -3.2%:

Գծապատկեր 15. Հայաստանում սպառողական գների ինդեքս, %:



Գծապատկեր 16. Տնտեսության առանձին հատվածներում գների տոկոսային փոփոխությունները՝ նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ, %:



ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

2026թ. մարտի վերջի դրությամբ Հայաստանի պետական պարտքը կազմել է 14,077.1 մլն ԱՄՆ դոլար, որից՝

- արտաքին պարտքը կազմել է 6,672.6 մլն ԱՄՆ դոլար (2025թ. ցուցանիշի համեմատ կրճատվել է -4.4%-ով),
- ներքին պարտքը կազմել է 7,395.6 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 12.1%:

Գծապատկեր 17. Հայաստանի պետական պարտք, մլն ԱՄՆ դոլար:



- **Պետական բյուջե:**

Բյուջեի եկամուտները 2026թ. հունվար-մարտին կազմել են 668.5 մլրդ ՀՀ դրամ, աճը՝ 11.9%, ինչը հիմնականում ապահովվել է հարկերի և տուրքերի հաշվին (643.4 մլրդ ՀՀ դրամ, աճը՝ 13.6%:

Բյուջեի ծախսերը 2026թ. հունվար-մարտին կազմել են 603.3 մլրդ ՀՀ դրամ, աճը՝ 4.7%:

- Բյուջեի ընթացիկ ծախսերն աճել են 11.9%-ով (պետական հատվածի աշխատողների աշխատավարձ, ապրանքների և ծառայությունների գնում, տոկոսավճարներ, դրամաշնորհ և այլն)

- Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կրճատվել են -43.2%-ով (ակտիվների ձեռքբերում և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր):

Գծապատկեր 18. Հայաստանի պետական բյուջեի եկամուտներն ու ծախսերը, մլրդ ՀՀ դրամ: